1918-20Ի ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀՀ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ (1991-2019)

ԼԻԼԻԹ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
lilithovannisian@yahoo.com

ՄՈՒՏՔ

1991ին Հայաստանի անկախութեան վերականգնումը նոր լիցք է հաղորդել հայոց պատմութեան նոր եւ նորագոյն ժամանակների հիմնահարցերի ուսումնասիրմանը՝ հայկական անկախ պետականութեան ու ազգային միասնութեան գաղափարների հետ դրանց պատճառահետեւանքային կապերի վերհանման ու վերագնահատման տեսանկիւնից:

Այս յօդուածում քննութեան են առնուած Հայաստանի Գ. Հանրապետութեան (ՀՀ) ժամանակաշրջանում (1991-2019) Հայկական Հարցի 1918-20՝ դիւանագիտական բանակցութիւնների եւ դրանց արդիւնքների վերլուծութեանը նուիրուած պատմագիտական հիմնարար ուսումնասիրութիւնները, որոնց յետնախորքում հայկական անկախ պետականութեան վերականգնման, պահպանման եւ ամրապնդման, հայոց պահանջատիրութեան բաւարարման արդիական հիմնախնդիրների լուծման գործնական ուղիների յստակեցումն է՝ ժամանակաշրջանի առանձնայատկութիւններին համապատասխան եւ պայմանաւորուած նրա մարտահրաւէրներին դիմակայելու անհրաժեշտութեամբ: Շեշտը դրուած է Ա. Աշխարհամարտի աւարտական փուլում հայկական ազգային անկախ պետականութեան վերականգնման երազանքը գաղափարից իրականութեան վերածելու, ապա պատերազմի աւարտից յետոյ՝ Փարիզի Հաշտութեան Միջազգային վեհաժողովի ընթացքում Հայաստանի Ա. Հանրապետութեան (ՀԱՀ) կողմից այն ամրապնդելու ուղղութեամբ իրականացուած քաղաքական քայլերի պատմագիտական արժեւորման եւ վերարժեւորման հարցերի վրայ[1]:

1918-20 ժամանակահատուածի ընտրութիւնը պատահական չէ. այն ուղղակիօրէն առնչւում է հայոց անկախ պետականութեան եւ ազգային միասնութեան հիմնահարցերին, բացի այդ, ՀԱՀի 1918-20՝ Հայկական Հարցի դիւանագիտական քննարկումների պատմութեան, դրանց արդիւնքների, մասնաւորապէս՝ Սեւրի պայմանագրի եւ ԱՄՆ Նախագահ Ուուդրօ Ուիլսընի իրաւարար վճռի լուսաբանումը գիտական մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում՝ հայոց պահանջատիրութեան արդիականութեամբ առումով:

Այստեղշխատութեան մէջ լուսաբանուած գիտական տեսակէտների հեղինակները ՀՀ պատմաբանների աւագ, միջին եւ երիտասարդ սերունդների ներկայացուցիչներ են, որոնց մօտեցումներն ու կարծիքները այս նիւթով, թէեւ կրում են հեղինակների ապրած ժամանակների գաղափարա-

քաղաքական ազդեցութիւնը, այնուամենայնիւ, բացայայտում են դրանց խորքային ընդհանրութիւնները:

1991-2019՝ ՀՀ պատմաբանների աշխատութիւններում ներկայացուել եւ վերարժեւորուել են 1917ի վերջին ու 1918ի սկզբին հայ ազգային նպատակների իրագործման հանգամանքները: Վերագնահատուել է հայ ազգային կուսակցութիւնների գործունէութիւնն հայ ժողովրդի արեւելեան հատուածի, զանգուածային կոտորածների, տեղահանութեան ու բռնագաղթի հետեւանքով հայրենազրկուած, աշխարհով մէկ սփռուած արեւմտահայերի շահերը պաշտպանելու, Հայաստանի երկու մասերի իրաւական կարգավիճակը հայ ժողովրդի յետագայ անվտանգ զարգացման հրամայականին համապատասխան ապահովելու ուղղութեամբ: Վերարժեւորուել են հայոց անկախ պետականութեան վերականգնման ներքին եւ արտաքին հանգամանքները, Քառեակ Միութեան եւ Դաշնակից Տէրութիւնների դիրքորոշումը հայոց պետականութեան վերականգնման եւ նրա սահմանների հարցերում, վեր են հանուել հայոց անկախ պետութեան արտաքին քաղաքական կողմնորոշման իւրայատկութիւնները եւ հեռանկարները:

Ընդհուպ 1990ականների աւարտը 1918-20ի հայ անկախ պետականութեան ու ազգային միասնութեան հիմնահարցերը գլխաւորապէս ուսումնասիրում էին Սփիւռքում: Այս տեսանկիւնից յիշատակելի են Ռիչըրդ Յովհաննիսեանի, Լեւոն Մարաշլեանի, Ագապի Նասիպեանի, Զաւէն Մսըրլեանի աշխատութիւնները: Յիրաւի, սփիւռքահայ պատմաբանների հիմնարար ուսումնասիրութիւնները եւս ծանրակշիռ ներդրում են հայ պատմագիտութեան մէջ:

ՊՐԵՍԹ-ԼԻԹՈՎՍՔԻՑ ՄԻՆՉԵՒ ՊԱԹՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՒԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

1918ին հայոց անկախ պետականութեան վերականգնման ընթացքն անմիջականօրէն կապուած էր Ա. Աշխարհամարտի աւարտական փուլում Հայաստանի շուրջ տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձութիւնների հետ: Այսպէս, **Վահան Մելիքեան**ի դիտարկմամբ, թէեւ Քառեակ Միութեան պետութիւնների՝ Գերմանիայի, Աւստրօ-Հունգարիայի, Օսմանեան Կայսրութեան եւ Բուլղարիայի հետ անջատ հաշտութիւն կնքելու բոլշեւիկեան քաղաքականութիւնը ՀՅԴի համար լիովին հասկանալի չէր, այնուամենայնիւ, հայ բնակչութեան եւ տարածքների անվտանգութեան ապահովման նկատառումներով կուսակցութեան ջանքերով հետեւողականօրէն իրականացուում էր հայկական զօրքի զօրակոչը: Աւելին, գիտակցուում էր, որ ռուսական պետականամէտ ռազմաքաղաքական ուժերի հետ կայուն դաշինքի ստեղծումն առաւելապէս բխում էր հայ ժողովրդի շահերից, քանի որ, նախ բացայայտ չէր բարձրացուում ազգային ինքնիշխանութեան մերժման խնդիրը, ապա Արեւմտեան Հայաստանում կանգնած Կովկասեան բանակի զօրամասերի ներկայութիւնը երաշխաւորում էր ռուսաստանեան կենտրո-

նամէտ ուժերի միջոցով Հայկական Հարցի բարենպաստ լուծումը[2]: Սակայն, Ռուսաստանից առանձին գործելու եւ Օսմանեան Կայսրութեան հետ անջատ հաշտութիւն կնքելու՝ Անդրկովկասեան Կոմիսարիատի դիրքորոշման պայմաններում «*հայ իրականութեան ազդեցիկ քաղաքական կուսակցութիւնը՝ Դաշնակցութիւնը, իհարկէ երկիւղելով ու կասկածելով, բայց եւ հակաբոլշեւիկեան ալիքի վրայ վճռականօրէն ընտրեց Թուրքիայի հետ մերձեցման ճանապարհով եւ հարեւանների աճող ոչ-բարեհաճ վերաբերմունքի միջավայրում՝ ազգային գլխաւոր խնդիրները լուծելու ճանապարհը, նաեւ անկախութեան հիմնահարցը: Շարունակուող պատերազմի պայմաններում անորոշ մի կարածքի վրայ պետութիւն վերագտնելու գաղափարը, փաստօրէն, գերակայեց բազմաթիւ ոչ-պակաս համազգային կենսական նշանակութիւն ունեցող հիմնահարցերի վրայ, մանաւանդ, որ այդ մեծ գործընթացի նախաձեռնութիւնն ամէնեւին հայ ազգային-դեմոկրատական կուսակցութեանը չէր պատկանում: Մէկ դար անց, ՀՅԴն դէմ է իր ընտրած ուղենիշին, որն իդէպ, սկիզբ էր առել 1907 թուականին, ի դէմս ՀՅԴ-Երիտթուրքեր համագործակցութեանը*»[3]՝ շեշտում է Մելիքեանը[4]:

Անուանի պատմաբան **Հրանտ Աւետիսեան**ի համոզմամբ, Անդրկովկասեան Սէյմում ՀՅԴ ներկայացուցիչների (Արշակ Զուրաբեան, Ալեքսանդր Խատիսեան, Յովհաննէս Քաջազնունի, Սիրական Տիգրանեան) առաջ քաշած Արեւմտեան Հայաստանի ինքնորոշման եւ ինքնավարութեան հարցադրումը ձախողելու գործում վճռական դեր է կատարել մուսաւաթականների ընդգծուած հակահայ դիրքորոշումը: Ի հակադրութիւն հայկական կողմի հարցադրման, նրանք բարձրացնում էին ոչ միայն հայերի, այլեւ Ռուսաստանի սահմաններում բոլոր ազգութիւնների ինքնորոշման հարցը՝ նկատի ունենալով նախեւառաջ մուսուլմաններին եւ *իրրեդենտիզմի*՝ թուրքալեզու ժողովուրդներին միասնական թուրքական պետութեան սահմաններում միաւորելու քաղաքականութիւնը, որը յանգում էր նախ եւ առաջ Կովկասի «միաւորմանը»՝ Օսմանեան Կայսրութեանը: Կովկասի մուսաւաթականների ճնշման եւ վրացի մենշեւիկների խուսափողական կեցուածքի պայմաններում Անդրկովկասի Սէյմի հաստատած հաշտութեան հիմնադրոյթներում ամրագրուեցին կնքուելիք հաշտութեան պայմանների հիմքում «*Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ 1914 թ. պատերազմ յայտարարելու պահին եղած պետական սահմանների վերականգնումը*» եւ «*Արեւելեան Անատոլիայի ինքնորոշման իրաւունքին, մասնաւորապէս Թուրքահայաստանի ինքնորոշմանը՝ թուրքական պետականութեան շրջանակներում*» ձգտելը: Աւետիսեանը հիմնաւորում է, որ գերմանա-աւստրո-թուրքական պատուիրակութիւնները Պրեսթ-Լիթովսքի հաշտութեան բանակցութիւններում «երկակի ստանդարտների» դիւանագիտութեան միջոցով կարողացան հմտօրէն օգտագործել ազգերի ինքնորոշման միջազգային-իրաւական սկզբունքը Խորհրդային Ռուսաստանի դէմ՝ յօգուտ Քառեակ Միութեան երկրների՝ մասնաւորապէս, Թուրքիայի ծաւալապաշտական նպատակների՝

դրանով իսկ ոչ միայն ձախողելով Հայկական Հարցի արդարացի լուծումն այդ սկզբունքի հիման վրայ, այլեւ Պրեսթ-Լիթովսքի հաշտութեան պայմանագրով հասնելով թուրքական պետութեան ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով հայաթափուած Արեւմտեան Հայաստանում թուրքական տիրապետութեան վերականգնմանը[5]: Այդպիսով ի չիք դարձաւ 1917 Դեկտեմբերի 29ին Խորհրդային Ռուսաստանի գործադիր իշխանութեան՝ Ժողկոմխորհի ընդունած «Թուրքահայաստանի Մասին» հրովարտակի իրականացումը: Նաեւ ժխտուեց խորհրդային կառավարութեան «Հաշտութեան Մասին» հրովարտակով հռչակուած «հաշտութիւն առանց հողագրաւումների եւ ռազմատուգանքների» սկզբունքը[6]: Աւետիսեանը թուրքական գործելակերպի մէջ կարեւորում է համաթուրքական նուաճողական նպատակների իրագործմանն ուղղուած բարոյահոգեբանական ճնշումների դիւանագիտական հնարքի եւ տարածքային զաւթումների տրամաբանուած ու հետեւողական զուգակցումը: Դրանով էլ նա բացատրում եւ հիմնաւորում է օսմանեան իշխանութիւնների կողմից հայերի ցեղասպանութիւնն ու հայրենազրկումը շարունակելը եւ քրտական էթնիկ տարրն ամրապնդելը բռնազաւթուած հայկական տարածքում, թուրքական դիւանագիտութեան կողմից Արեւմտեան Հայաստանի ինքնավարութիւնը նոյնիսկ թուրքական պետութեան սահմաններում անզիջում կերպով մերժելը, անթոյլատրելի ու «իրենց ներքին գործը» համարելը, Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու, անկախ հռչակելու եւ այն Թուրքիայի ու Ռուսաստանի միջեւ *բուֆեր*ային պետութեան վերածելու քաղաքականութիւնը[7]:

Եթէ Աւետիսեանը «Թուրքահայաստանի Մասին» հրովարտակի չիրագործումը եւ Արեւմտեան Հայաստանի, Կարսի ու Արտահանի մարզերի յանձնումը բացատրում է Պրեսթ-Լիթովսքի բանակցութիւնների ընթացքում Թուրքիայի զաւթողական կեցուածքով, խորհրդային կառավարութեան՝ բանակցութիւնները ձգձգելու եւ զիջումների քաղաքականութեամբ, ապա **Ստեփան** եւ **Կարէն (Կարօ) Պօղոսեան**ները կարեւորում են «հայ ժողովրդի անկարողութիւնը», միջազգային յարաբերութիւններում նրա «գործօն չլինելը»՝ նկատի ունենալով Արեւմտեան Հայաստանի հայաթափուած լինելը, հայերի՝ ռազմական ու դիւանագիտական ուժի բացակայութիւնը, ազգային կենսական հարցերում, մասնաւորապէս՝ հայկական տարածքներում ինքնապաշտպանութեան կազմակերպման հարցում անմիաբան լինելը, Հայկական Հարցում մեծ տէրութիւնների, Խորհրդային Ռուսաստանի եւ Օսմանեան Կայսրութեան շահադիտական քաղաքականութը[8]:

Անդրադառնալով Կարսի, Արտահանի եւ Պաթումի մարզերում հանրաքուէի հարցին՝ Պօղոսեանները շեշտում են, որ նշուած տարածքների բնակչութեան՝ իր պետական-իրաւական եւ միջազգային-իրաւական նոր կարգը հանրաքուէի ու դրա արդիւնքները Օսմանեան Կայսրութեան ու հարեւան պետութիւնների հետ համաձայնեցնելու միջոցով որոշելու իրաւունքը յարգելու փոխարէն, «.. *մտնելով այդ վարչական տարածքները, թուրքերը հան-*

դէս եկան հանրաքուէն նախապատրաստողի եւ անցկացնողի դերում ու այդ արեցին թուրքավարի՝ Կարսի անկումից չորս ամիս անց»: Նրանք նկատի ունեն մինչեւ հանրաքուէի անցկացումը տեղաբնակ ոչ-մահմեդական բնակչութեան հանդէպ ահաբեկչութեան քաղաքականութիւնը եւ դրա հետեւանքով այդ բնակչութեան կողմից հանրաքուէի պոյքոթ-մերժումը, նաեւ միայն մահմեդական բնակչութեան քուէարկութեան հիման վրայ Կարսը, Արտահանը եւ Պաթումը «ետգրաւուած հոչակելը» սուլթանի հրովարտակով: Այս իմաստով պատմաբանները կարեւորում են 1918 Օգոստոսի 12ին Կարսի Հայ Ազգային Խորհրդի կողմից Բեռլինի կառավարութեանը ներկայացուած յուշագիրը վերոնշեալ հանրաքուէի մասին: Փաստաթղթում ասւում էր, որ հայ բնակչութեանը փոքրամասնութիւն դարձնելու համար մեծ թուով հայերի հարկադրել էին արտագաղթել եւ այլ վայրերից մահմեդականներ էին վերաբնակեցրել հայաթափուած բնակավայրերում[9]:

Հայ ժողովրդի օրինական իրաւունքների ու ազգային շահերի ոտնահարումը շարունակուեց 1918 Մայիս–Յունիսին Պաթումի՝ հայ-թուրքական դիւանագիտական բանակցութիւններում: Աւետիսեանը հիմնաւորում է, որ այդ բանակցութիւններում ՀՀ անկախութեան ճանաչման, նրա հետ «բարեկամութեան, յաւերժ խաղաղութեան» վերաբերեալ թուրքական պատուիրակութեան ներկայացրած ծրագիրը հայաջինջ քաղաքականութեան նոր դրսեւորում էր, որով երիտթուրքական կառավարութիւնը, ռազմաքաղաքական իրադրութեանը համապատասխան, լուծում էր իր համար կենսական միքանի խնդիր. վերահաստատում էր Պրեսթ-Լիթովսքի հաշտութեան պայմանագրով Արեւմտեան Հայաստանում թուրքական կառավարութեան գաղութատիրական իրաւունքների վերականգնումը, միջազգային-իրաւական ձեւակերպում էր տալիս Արեւելեան Հայաստանի տարածքի զգալի մասի՝ Շարուր-Դարալագեազի, Նախիջեւանի, Սուրմալուի, Կարսի, Կաղզուանի, Սարիղամիշի, Ախալքալաքի, Լոռու զաւթմանը, ինչի հետեւանքով Հայաստանն ու հայ ժողովուրդը դրւում էին աւելի ծանր պայմանների մէջ, քան պարտադրուած էր եղել Պրեսթ-Լիթովսքի պայմանագրով[10]:

Աւետիսեանի եւ **Գեղամ Պետրոսեան**ի համոզմամբ, 1918 Յունիսի 4ի Պաթումի Պայմանագրի ստորագրումով թուրքական կառավարութիւնը ժամանակ շահեց դէպի Բաքու շարժուելու ծրագրին նախապատրաստուելու համար: Ծրագրի իրագործումը լիովին հնարաւոր էր Հայաստանի անկախ հանրապետութեան ճանաչման պայմաններում, քանի որ տնտեսապէս աղքատ, փոքր տարածք ունեցող ՀԱՀն չէր կարող երկիւղ ներշնչել Օսմանեան Կայսրութեանը: Աւելին, հեռանկարում թուրքերը տեսնում էին այդ Հայաստանի վերացումը: Եւ վերջապէս, Անդրկովկասում Հայաստանի անկախ հանրապետութեան հռչակմամբ վերացուեց Արեւմտեան Հայաստանի ինքնավարութեան՝ թուրքական կառավարութեանն անհանգստացնող հարցը, որը կարող էր բարձրացուել Օսմանեան Կայսրութեանը հակառակորդ պետութիւնների կողմից՝ համաշխարհային պատերազմում նրա

պարտութեան դէպքում: Թուրքերը հնարաւորութիւն ստացան յայտարարելու, որ Հայկական Հարցն արդէն լուծուած է[11]: Թէեւ Պաթումի Պայմանագիրը ՀՀ արտաքին քաղաքական գործունէութիւնը սահմանափակում էր Քառեակ Միութեան պետութիւնների հետ յարաբերութիւններով, այդուհանդերձ, 1918 Մայիսի 30ին հրապարակուած կոչի համաձայն, Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդը ստանձնեց հայկական բոլոր գաւառների միակ եւ գերագոյն իշխանութեան գործառոյթներ՝ չմատնանշելով, թէ որոշակի ո՛ր տարածքների մասին է խօսքը: Դա նշանակում է, որ Հայկական Հարցն արդէն իր հաստատուն տեղն էր գրաւելու ՀՀ արտաքին քաղաքականութեան ուղեգծում: Պատահական չէ, որ ՀՀ խորհրդի (յետագայում՝ խորհրդարան) անդրանիկ նիստում նախագահ Աւետիք Սահակեանը, չխուսափելով նիստին Գերմանիայի, Աւստրօ-Հունգարիայի եւ Օսմանեան Կայսրութեան ներկայացուցիչների մասնակցութիւնից, յայտարարեց հետեւեալը.

> Այո՛, մեր հանրապետութիւնը փոքր է ու նեղ իր սահմաններով, նա զրկուել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մէջ տեղաւորել ամբողջ ազգաբնակութիւնը եւ, կարծես թէ, պայմաններ չունի անկախ գոյութեան համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ. միշտ ես հաւատում եմ, որ մեր սահմանները կ'ընդարձակուեն կեանքի երկաթէ օրէնքի ուժով, մեր արդար եւ անվիճելի իրաւունքների պաշտպանութեամբ գրաւած հողամասերի վերաբերմամբ եւ նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի ու նրա դաշնակից պետութիւնների հետ ...: Մենք ընտրել ենք համաձայնութեան եւ խաղաղութեան ուղին ... [12]:

«*Դա նշանակում է, որ Արեւմտեան Հայաստանի հիմնահարցն այնքան վճռորոշ էր հայութեան համար, որ Պաթումի Պայմանագրով ծանրագոյն վիճակի մէջ դրուած Արարատեան Հանրապետութիւնն իսկ... ենթատեքստով արտայայտում էր իր մտադրութիւնները Հայկական Հարցում*»[13]՝ շեշտում է **Աշոտ Մելքոնեանը**: ՀԱՀի տարածքային յաւակնութիւնների հիմքում ընկած էին ոչ միայն պատմական գործօնը եւ թուրքական մահաբեր վտանգից պաշտպանուելու անհրաժեշտութիւնը, այլեւ այն փաստը, որ Հայաստանի անկախութեան հռչակումը նիւթականացրել էր հայոց անկախ պետականութեան գաղափարը: **Արարատ Յակոբեանը** իրաւացիօրէն յաւելում է.

> Այս իրողութիւնն արձանագրելով հանդերձ՝ բնաւ չի կարելի կիսել այն հեղինակների տեսակէտը, որոնք ՀՀ անկախութիւնը դիտում են իբրեւ զուտ արտաքին ուժերի, տուեալ դէպքում՝ Թուրքիայի թելադրանքը եւ նոյնիսկ «նուէրը»: Հայ-թուրքական յարաբերութիւնների նախընթաց պատմութիւնը, պատմական դէպքերի ու իրադարձութիւնների տրամաբանութիւնը յուշում են, որ եթէ չլինէին մայիսեան հերոսամարտերը, Բաքուի ինքնապաշտպանութիւնը, եւ խնդիրը թողնուէր Թուրքիային, ապա նա ոչ միայն Հայաստանը չէր «անկախացնի», այլեւ պանթուրքական ծրագրերի ենթախորքում Անդրկովկասում եւս հայ չէր թողնի ու արեւելահայոց հարցը «կը լուծէր» արեւմտահայոց հարցի նման[14]:

Այսպիսով, պատմագիտական ուսումնասիրութիւններում շեշտւում է, որ 1918ին Արեւելեան Հայաստանի տարածքում հայկական անկախ պետականութեան վերականգնումն է եղել Հայաստանի երկու մասերից իւրաքանչիւրի իրաւական կարգավիճակի վերաբերեալ հայ ազգային, հասարակական-քաղաքական ու մեծ տէրութիւնների կառավարող շրջանակներում քննարկուող առանձին ծրագրերը վերանայելու եւ դրանք Անկախ ու Միացեալ Հայաստանի ստեղծման՝ հրատապ դարձած գաղափարին համահունչ վերաձեւակերպելու ազդակը:

ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԻ ՎԵՐԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ

Ա. Աշխարհամարտում Օսմանեան Կայսրութեան պարտութիւնից եւ 1918 Հոկտեմբերի 30ին Մուտրոսի Զինադադարի կնքումից յետոյ՝ նոր ռազմաքաղաքական իրադրութեան պայմաններում՝ Հոկտեմբերի 31ին, Բեռլինում գործող հայկական պատուիրակութեան անդամների եւ հայ պետական ու հասարակական-քաղաքական գործիչների մասնակցութեամբ Գերմանիայի մայրաքաղաքում կայացած խորհրդակցութեան արդիւնքում որոշուեց, որ Հայկական Հարցի լուծման բոլոր տարբերակներում «*Հայաստանը վերջնական եւ անվերադարձ պէտք է դուրս գայ թուրքական ոլորտից եւ նրա ազդեցութիւնից*»[15]:

1919 Փետրուարի 6-13՝ Երեւանում կայացած Արեւմտահայերի Երկրորդ Համագումարում ընդունուած ծրագրային որոշման համաձայն, Հայաստանը հռչակուեց անկախ եւ միացեալ: Դա նշանակում էր «Մէկ ժողովուրդ, մէկ հայրենիք» սկզբունքի ընդունում, հայութեան ինքնակազմակերպման նոր մակարդակի սկիզբ, բայց ոչ բնաւ Հայկական Հարցի դուրսմղում միջազգային դիւանագիտութեան օրակարգից, քանի որ համագումարն արտայայտում էր արեւմտահայերի՝ ՀՀում ապաստանած հատուածի շահերը՝ առանց հայկական գաղթօճախների, Արեւմտեան Հայաստանի ու Կովկասի հայերի: «*Նախորդ համագումարից այն նախ եւ առաջ առանձնանում է նրանով, որ արտայայտում էր անկախութիւն հռչակած ժողովրդի կամքը*»: Աւելին, «*նոր համագումարը կազմկոմիտէի արեւմտահայ գործիչների կողմից դիտւում էր որպէս Հայաստանի Հանրապետութիւնում արեւմտահայերի ներկայացուցչական, քաղաքական մարմին*»՝ նշում է Մելիքեանը: Այնուհետեւ, անդրադառնալով արեւմտահայերին Պօղոս Նուպարի շուրջ համախմբելու, ապա՝ Պօղոս Նուպարի ու Քաջազնունու փոխհամաձայնութեամբ համազգային սահմանադրութիւն ընդունելու եւ միացեալ կառավարութիւն կազմաւորելու միջոցով «մէկ հայրենիք»ի, այսինքն՝ «Միացեալ եւ Ազատ Հայաստանի» գաղափարն իրագործելու՝ համագումարի դիրքորոշմանը՝ պատմաբանը շեշտում է, որ դրանով «*վճռական քայլ արուեց հայ ժողովրդի երկու հատուածների մերձեցման, քաղաքական գործիչների հաշտեցման ուղղութեամբ: ...Նախաձեռնութիւնը պատկանում էր արեւմտահայերին, ինչը բխում էր ժողովրդի այդ հատուածի օրհասական, ողբեր-*

գական վիճակից»[16]: Նաեւ նշենք, որ համահայկական խնդիրների նկատմամբ արեւելահայութեան, արեւմտահայութեան եւ հայկական գաղթօճախների դիրքորոշումներն ի մի բերելու, ազգային պահանջների միասնական ծրագիր մշակելու նպատակով Պօղոս Նուպարն առաջ էր քաշել հայկական ազգային համագումար հրաւիրելու գաղափարը, ի կենսագործումն որի 1919 Փետրուարի 24ից Ապրիլի 22ը Փարիզում տեղի ունեցաւ Համահայկական Համագումարը[17]: Մելիքեանը կարեւորում է այս համագումարն արեւմտահայերի ինքնակազմակերպման, արեւմտահայ-արեւելահայ առճակատումը մեղմելու, համազգային կենսական հիմնահարցերի վերաբերեալ միասնական դիրքորոշում մշակելու եւ այն միջազգային ասպարէզում միասնաբար պաշտպանելու տեսանկիւնից՝ նշելով, որ «*1878 թ. Բեռլինի վեհաժողովից յետոյ, Հայկական Հարցն առաջին անգամ յառնեց համահայկական քաղաքական ծրագրի տեսքով ու նաեւ որպէս հետեւանք՝ համատեղ գործունէութեան եւ փոխադարձ զիջումների*»[18]:

Մելիքեանը միանգամայն օրինաչափ է համարում ՀՅԴի բարձր հեղինակութիւնն ու ազդեցութիւնը հայ հասարակական-քաղաքական կեանքում: Միաժամանակ, նա շեշտում է, որ վերջինիս հզօրութիւնն առարկայօրէն մեկուսացնում էր միւս առաջատար ազգային ուժերին՝ Ս.Դ. Հնչակեան եւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութիւններին, աւելի յաճախ նրանց վերածում անհաշտ հակառակորդների, իսկ բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ այդ երեւոյթի խորացումն արդէն յանգեցրեց ճակատագրական սխալների[19]:

Մելիքեանը նկատում է, որ ՀԱՀի գոյութեան ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում համազգային նախաձեռնողական արտաքին քաղաքականութեան օրակարգ մշակելու փոխարէն շարունակում էին քննարկել Հայկական Հարցի բովանդակութեան եւ բնոյթի, Հայաստանի երկու մասերի իրաւական կարգավիճակի հարցերը միասնութեան մէ՞ջ, թէ՞ առանձին-առանձին դիտարկելու տեսակէտները: Պատմաբանն այդ իրողութիւնը բացատրում է նրանով, որ տասնամեակներ շարունակ հայ հասարակական-քաղաքական միտքը հայոց պատմական հայրենիքում հայկական պետականութեան վերականգնման գաղափարը կապել էր բացառապէս Արեւմտեան Հայաստանի հետ: Ընդ որում, Հայկական Հարցը հետապնդել էր Արեւմտեան Հայաստանի բարենորոգումների կամ էլ հեռաւոր ապագայում հնարաւոր ինքնորոշման հարցերը: Ինչ վերաբերում է Արեւելեան Հայաստանին, ապա մինչեւ 1917ի վերջերը՝ ռուսական բազմազգ պետութեան փլուզումը, նրա որեւէ հատուածում հայկական պետականութեան վերականգնման որեւէ ծրագիր կամ նպատակ գոյութիւն չէր ունեցել: Հետեւաբար, հայկական անկախ պետականութեան վերականգնումն ի դէմ ՀԱՀի, երբ պատմական հայրենիքի մեծ մասի խնդիրը տակաւին լուծուած չէր, արեւմտահայերի մի մասի համար «խորթ, անընդունելի» երեւոյթ էր: Մելիքեանը նշում է, որ արեւելահայ ու արեւմտահայ

առճակատումից, նաեւ արեւմտահայութեան մի զգալի մասի մէջ ՀԱՀի նկատմամբ խորացող «անհանդուրժողական» վերաբերմունքից բացի, տարանջատ ու հատուածական էր նախ եւ առաջ ՀԱՀում, Արեւմտեան Հայաստանում, Կովկասում, հեռաւոր երկրների հայկական գաղթօճախներում ապաստանած արեւմտահայկական խմբերի գործունէութիւնը[20]:

ՍԵՒՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1918-20ի հայկական պետականութեան եւ ազգային միասնութեան հիմնահարցի հետ անմիջականօրէն կապուած են նաեւ Սեւրի Պայմանագրում Հայաստանի սահմաններին, իրաւական կարգավիճակին ու հայ ժողովրդի իրաւունքներին վերաբերող յօդուածների վերագնահատման խնդիրները:

Ա. Համաշխարհային Պատերազմում յաղթանակած Դաշնակից Տէրութիւնների եւ պարտուած Օսմանեան Կայսրութեան միջեւ 1920 Օգոստոսի 10ին Սեւրի Հաշտութեան Պայմանագրի ստորագրմամբ Փարիզի Հաշտութեան Միջազգային վեհաժողովն աւարտեց պատերազմի արդիւնքների ամփոփումը: Դաշնակից պետութիւնների շարքում երիտթուրքական կառավարութեան հետ պայմանագիրը ստորագրեց նաեւ Հայաստանը՝ ի դէմս ՀԱՀ պաշտօնական պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեանի: ՀԱՀի մասնակցութիւնը պայմանագրի ստորագրմանը՝ միջազգային իրաւունքի տեսանկիւնից նշանակում էր՝ Հայաստանի *դէ եուրէ* (de jure), ճանաչում պայմանագիրը ստորագրող պետութիւնների կողմից: 1915-16ին իր հայրենիքում բռնի տեղահանութեան ու զանգուածային կոտորածների ենթարկուած, հայրենազրկուած, սփռուած եւ միայն 1918 մայիսեան հերոսամարտերի արդիւնքում հայրենի մի փոքր հողակտորի վրայ անկախ պետականութիւնը նոր-նոր վերագտած հայ ժողովուրդը Սեւրի Պայմանագրի հետ կապում էր Հայկական Հարցի արդարացի լուծման յոյսը:

Թէեւ Սեւրի Պայմանագրի ստորագրումից անցել է մէկ դար, այդ միջազգային դիւանագիտական փաստաթղթի նկատմամբ ՀՀի ու Սփիւռքի թէ՛ գիտական եւ թէ՛ հասարակական-քաղաքական շրջանակներում հետաքրքրութիւնը ոչ միայն չի նուազել, այլեւ ձեռք է բերել նոր իմաստ ու բովանդակութիւն: Դա բացատրւում է նրանով, որ հայ պատմագիտութիւնն ընդհուպ վերջին միքանի տարիները, Սեւրի Պայմանագիրը հիմնականում դիտարկել է հայ ժողովրդի տարածքային պահանջների վերաբերեալ 88-93րդ յօդուածների շրջանակներում: Եւ միայն վերջին տարիներին են ուսումնասիրութեան առարկայ դարձել պայմանագրում ՀՀին ու հայութեան անուղղակիօրէն վերաբերող, բայց չափազանց կարեւոր յօդուածները: Սեւրի Պայմանագիրը գիտական հետաքրքրութիւն ներկայացնելուց բացի, հայերի համար ունի քաղաքական նշանակութիւն, քանի որ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի անվիճելի եւ արդարացի իրա-

ունքները հաստատող կարեւոր դիւանագիտական փաստաթուղթ է, իրաւական անժամանցելի հիմք՝ հայոց պահանջատիրութեան համար:

Պատմագիտական աշխատութիւններում շեշտւում է, որ, եթէ իրադարձութիւնները բարեյաջող ընթացք ունենային եւ Սեւրի Պայմանագրում հայ ժողովրդին ու Հայաստանին վերաբերող յօդուածներն ամբողջութեամբ իրագործուէին, ապա կարելի կը լինէր յայտարարել, որ լուծուել է Հայկական Հարցը: Նաեւ ընդգծւում է, որ, թէեւ Սեւրի Պայմանագիրը չվաւերացուեց ու չիրագործուեց, այնուամենայնիւ, այդ պայմանագրով Արեւմուտքը պաշտօնապէս ճանաչեց հայ ժողովրդի պատմական իրաւունքն Արեւմտեան Հայաստանի նկատմամբ եւ այդ տարածքում հայկական անկախ պետութեան ստեղծման անհրաժեշտութիւնը[21]: Այս տեսանկիւնից Սեւրի Պայմանագիրը գնահատւում է որպէս Հայկական Հարցի լուծման մինչ այդ եղած տարբերակներից ամենայաջողն ու արմատականը, քանի որ նրա հիմքում դրուած էր հայկական տարածքների միաւորմամբ անկախ Հայաստանի ստեղծման նպատակը: Այդուհանդերձ, Հայկական Հարցի լուծումը Դաշնակիցների համար ունէր առաւելապէս բարոյական-քարոզչական նշանակութիւն այն իմաստով, որ նրանք համաշխարհային պատերազմը յայտարարել էին պատերազմ՝ «յանուն փոքր ժողովուրդների ազատագրութեան»: «... *Սեւրը ծնուեց ոչ այնքան որպէս աշխատելուն նպատակադրուած պայմանագիր, որքան միջոց թոյլ չտալու, որ օսմանահպատակ ժողովուրդները, մասնաւորապէս հայերը կողմնորոշուէին դէպի Խորհրդային Ռուսաստան, յանձին ստեղծուելիք Հայաստանի ելք ունենալ դէպի Բաքու եւ Իրան, մեկուսացնել Թուրքիան Ռուսաստանից*»՝ շեշտում են Պօղոսեաններն ու յաւելում, որ Դաշնակից Տէրութիւնները մտադրութիւն չունէին մարդկային, նիւթական ու ֆինանսական միջոցներ տրամադրելու Սեւրի Պայմանագրով նախատեսուած Հայկական Հարցի լուծմանը[22]: Իսկ Աւետիսեանի կարծիքով, ամերիկեան զօրավար Ճէյմս Հարպորտի գլխաւորած ռազմական առաքելութեան կազմած Կոստանդնուպոլսից մինչեւ Անատոլիա, Արեւմտեան Հայաստան եւ Անդրկովկաս միասնական հոգատարութեան նախագծի իրագործման դէպքում չէր բացառւում նոր հնարաւորութիւնների ստեղծումը թուրքական կառավարութեան համաթուրքական նուաճողական ծրագրերի իրագործման համար: Հարցն այն է, որ ըստ 1919 Հոկտեմբերի 16ին Հարպորտի առաքելութեան կողմից ծերակոյտին ներկայացուած զեկուցագրի, Կոստանդնուպոլիսը, Անատոլիան, Արեւմտեան Հայաստանը եւ Անդրկովկասը ենթարկուելու էին ամերիկեան միասնական հովանաւորութեանը: Ընդ որում, Անդրկովկասը, որն անջատուել էր Ռուսաստանից, պէտք է միացուէր Թուրքիային: Միասնական հոգատարութեամբ ազգային պետութիւններ պէտք է կազմաւորէին թուրքերը, թաթարները, հայերը, վրացիները: Հարպորտի առաքելութեան անդամների կարծիքով, «*միասնական մանդատի իրացման ժամանակ հայերը եւ թուրքերը կը լինէին հարեւաններ, երկու կամ երեք մանդատի դէպքում՝ հակառակորդներ*»[23]: Աւե-

տիսեանն այս նախագիծը գնահատում է որպէս թուրքանպաստ, քանի որ «Հայաստանի «վերացումով» կապ կը հաստատուէր Կովկասի եւ Անդրկասպեան երկրների թուրք-թաթարների միջեւ, կը ստեղծուէր ուժեղ եւ միասնական թաթարական պետութիւն: Դառնալով երկրի գլխաւոր տէրերը՝ թուրքերը, միասնական հոգատարութեան ժամկէտի աւարտով վերսկսելու էին քրիստոնեաների՝ առաջին հերթին հայերի կոտորածներն ու թալանը: Աւետիսեանն իր տեսակէտը փաստարկում է 1919 Հոկտեմբերի 15ին Մուստաֆա Քեմալի հետեւեալ յայտարարութեամբ. «*Ելնելով մեր ամբողջ փորձից, մենք համոզուած ենք, որ Ամերիկան միակ երկիրն է, որն ի վիճակի է օգնել մեզ*»[24]: Համաթուրանիզմից ազատուելու միակ ճանապարհն, ըստ պատմաբանի, կարող էր լինել Անատոլիայի թուրքերի բաժանումը Կովկասից եւ Կասպիականից այն կողմ բնակուող թուրանականներից: Բաժանարարի դերում Հայաստանն էր[25]: Համաթրքութեան վտանգաւորութեան խնդիրը դիտարկելով ժամանակի հոլովոյթում՝ Աւետիսեանը միանգամայն իրատեսական եւ հիմնաւորուած է համարում ՀԱՀ կառավարութեան կողմից 1919 Յունիսի 16ին կնքուած վրաց-ադրբեջանական «պաշտպանական» համաձայնագրին միանալու գաղափարի մերժումը, քանի որ դրա նպատակը զօրավար Անտոն Տենիքինի բանակի առաջխաղացման դէպքում համատեղ հանդէս գալն էր: Կարեւորելով պատմական փորձի դերը՝ ազգի եւ պետութեան առջեւ ծառացած բարդ ու ճակատագրական իրավիճակներում ճիշտ կողմնորոշուելու գործում, պատմաբանը շեշտում է, որ Ռուսաստանի հարցում Հայաստանը չի կարող եւ չպէտք է կովկասեան ժողովուրդների կողմնորոշումն ունենայ. հակառուսական կողմնորոշումը չի բխում հայ ժողովրդի շահերից[26]:

Հայկական անկախ պետականութեան եւ ազգային միասնութեան հիմնահարցերն ամերիկեան միասնական հոգատարութեան շրջանակներում լուծելու հեռանկարների առնչութեամբ ուշագրաւ են Մելիքեանի եւ **Գայիանէ Մախմուրեանի** դիտարկումները: Մելիքեանը նշում է, որ Կոստանդնուպոլսից մինչեւ Կովկաս ամերիկեան միասնական հոգատարութեան գաղափարի հիմքում դրուած տարածաշրջանում ապրող տարբեր ազգերի ու ժողովուրդների նկատմամբ մէկ ուժային կենտրոնի հովանաւորութեան հաստատման սկզբունքի «*ենթատեքստում անպայման նկատի էր առնում բոլշեւիկների կողմից Անդրկովկասը խորհրդայնացնելու քաղաքականութեան գործօնը*»: Այս իմաստով պատմաբանը արդիական է համարում Հարպորտի մօտեցումն այն մասին, որ միասնական հոգատարութեան դէպքում հայերը եւ թուրքերը կը լինէին հարեւաններ, երկու կամ երեք հոգատարութեան դէպքում՝ հակառակորդներ[27]: Իսկ Մախմուրեանը նշում է, որ «*ժողովրդի եւ պետութեան ճակատագիրը միջազգային դիւանագիտական կոնգրէսին անմիջականօրէն յանձնելու մասին մեծ փէրութիւնների որոշումը գալիս էր կասեցնելու ճնշուած ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի իրագործումը: Ահա հենց այդ պատճառով էլ Հայաստանի ան-*

կախութեան գաղափարը յանգեցնում էր վերջինիս ինքնավարութեանը մէկ կամ բոլոր մեծ տէրութիւնների հովանու ներքոյ»: Բացի այդ, ՀԱՀի սահմանները ձեւաւորում էին ոչ թէ ներսից՝ պետութեան շահերին ու հնարաւորութիւններին համապատասխան, այլ այդ հարցի լուծումն ակնկալւում էր դրսից՝ Դաշնակից Տէրութիւններից, ինչն էլ հայ ժողովրդի ու նրա անկախ հանրապետութեան համար ծնում էր անորոշ ու սպասողական իրավիճակ՝ կաշկանդելով եւ կասեցնելով հայկական պետականութեան համար կենսական նշանակութիւն ունեցող բազմաթիւ հարցերի լուծումը[28]: Եւ քանի որ ՀԱՀը չափազանց թոյլ էր Թուրքիայի դէմ պատերազմից խուսափելու ու դիւանագիտական բանակցութիւնների միջոցով իր խաղաղ գոյակցութիւնն ապահովելու համար, ուստի նրան մնում էր մէկ այլընտրանք՝ հաւաքել առկայ բոլոր ուժերն ու փորձել համաձայնութեան գալ Խորհրդային Ռուսաստանի հետ, ինչը տեղի չունեցաւ[29]: **Գալուստ Գալոյեան**ի համոզմամբ եւս, ՀԱՀի շահը պահանջում էր մերձենալ Ռուսաստանի հետ[30]:

Մախմուրեանը նաեւ կարեւորում է հայկական գործօնի դերը Հայկական Հարցի արդարացի լուծման գործում: Նրա կարծիքով, Փարիզի Հաշտութեան Վեհաժողովի ընթացքում հայկական կողմի դիրքորոշումը կարող էր վճռորոշ նշանակութիւն ունենալ Հայաստանի քաղաքական կարգավիճակի, նրա սահմանների, Հայաստանի հոգատար պետութեան թեկնածութեան վերաբերեալ սկզբունքային հարցերում, եթէ հայկական պատուիրակութիւնները պաշտպանէին միեւնոյն ծրագրային դրոյթները եւ կարողանային դիւանագիտօրէն օգտագործել մեծ տէրութիւնների միջեւ հակասութիւնները: Դրա փոխարէն հայկական կողմն ունէր «*երկու տարբեր մօտեցում հայկական պետութեան ապագայի վերաբերեալ. սա վկայում էր, որ հայերը չունեն միասնական պատուիրակութիւն, որը վարէր երկակի խաղ, այլ ունեն երկու պատուիրակութիւն, որոնք մրցակցում են յանուն լիդէրութեան: Նոյնիսկ այս պարագայում պատուիրակութիւններից եւ ոչ մէկը չէր կարողանում մեծ տէրութիւններին ցոյց տալ Հայաստանի մանդատից նրանց համար հնարաւոր տնտեսական օգուտները կամ արտօնութիւնները: Այսպիսով, հայկական երկու պատուիրակութիւնների գործունէութիւնը ոչ թէ ներսից ուղղորդուող երկակի խաղ էր, այլ՝ երկու տարբեր դիրքորոշում ազգային խմբի ներսում*»[31]՝ նշում է Մախմուրեանը: Պատմաբանը քննադատում է նաեւ ՀՀ կառավարութեան արտաքին քաղաքականութեան արեւմտեան ուղղութիւնը եւ Սեւրի Պայմանագիրն արտաքին ուժերի կողմից իրագործուած տեսնելու՝ ՀՀ ղեկավարութեան յոյսերը, ընդգծելով, որ այդ դիրքորոշման հետեւանքով վտանգի տակ էր դրւում ամէն ինչ, այդ թւում՝ ազգի կեանքը[32]: Նրա կարծիքով, սխալ էր նաեւ յուսալ, թէ հայկական անկախ պետութեան սահմանները կարող էին որոշուել ԱՄՆ նախագահ Ուուդրօ Ուիլսընի իրաւարար վճռով, քանի որ դրանք, իրականում, պայմանաւորուած էին հայ-թուրքական յարաբերութիւնների ընթացքով, իսկ Դաշ-

նակից Տէրութիւնների միջամտութիւնը կարող էր միայն նպաստող, ոչ թէ վճռորոշ նշանակութիւն ունենալ[33]:

1920ի ամռանն ու յատկապէս Սեւրի Պայմանագրի կնքումից անմիջապէս յետոյ՝ թուրք-հայկական պատերազմի նախօրեակին, հայ քաղաքական գործիչներից շատերը գտնում էին, որ հնարաւոր էր համաձայնութեան գալ ու հաշտութեան պայմանագիր կնքել թուրքերի հետ՝ նրանցից ետ ստանալով Ալաշկերտն ու Բայազէտը սեւրեան պահանջներից հրաժարուելու դիմաց: «*Իհարկէ, կարելի է վիճարկել այդ վարկածի ռէալութեան շուրջը, բայց, այնուամենայնիւ, կարծում ենք՝ կային համաձայնութեան գալու հաւանականութեան որոշ պաշար ու կռուաններ: Սակայն հանրապետութեան ղեկավարութիւնը եւ գրեթէ ամբողջ ժողովուրդը չգնաց նման զիջման*»[34]՝ նշում է Յակոբեանը: Պատմաբանն այդ կապակցութեամբ յիշատակում է Քաջազնունու միտքը, որ այդ շրջանում Սեւրի Պայմանագիրը այնքան էր շլացրել մեր աչքերը, ոգեւորել եւ ինքնավստահ դարձրել մեզ, որ աւելորդ համարեցինք բանակցել թուրքերի հետ[35]: «*Աւելին, այդ ժամանակ նոյնիսկ գտնուեցին հայ «գործիչներ», որոնք անարդար համարեցին Սեւրի Պայմանագիրը՝ դժգոհելով, թէ նրանում ընդգրկուած չեն հայկական մնացած վիլայէթները: Դատողութիւններ անելով այդ մասին, այնուամենայնիւ, գտնում ենք, որ դժուար էր վստահել ու հաւատալ փոխզիջումնային բանակցութիւններ վարելու քեմալականների անկեղծութեանը*»[36]՝ յաւելում է Յակոբեանը: Նրա համոզմամբ, խորհրդա-քեմալական հակահայ գործակցութիւնը, քեմալական կառավարութեանը սիրաշահելու անգլօ-ֆրանսիական քաղաքականութիւնը Սեւրի Պայմանագրի հիման վրայ Հայկական Հարցի լուծման ձախողման հիմնական պատճառներն էին: Պատմաբանը նշում է, որ ՀԱՀ Արեւմտեան արտաքին քաղաքական կողմնորոշումը մեզ տուեց ընդամէնը Սեւրի Պայմանագրով ստորագրուած միացեալ, անկախ, ազատ Հայաստան, որն այդպէս էլ մնաց թղթի վրայ, չվաւերացուեց ոչ մի պետութեան կողմից եւ չիրականացաւ կեանքում: Միաժամանակ, նա ՀԱՀ Արեւմտեան արտաքին քաղաքական կողմնորոշման անխուսափելիութիւնը բացատրում է Ռուսաստանում իշխանութեան գլուխ կանգնած բոլշեւիկների հասարակական-քաղաքական վարչակարգի անընդունելիութեամբ, Ռուսաստանում ընթացող քաղաքացիական պատերազմով, որն անհնարին էր դարձնում Հայկական Հարցի արդարացի լուծման հարցում նրա օժանդակութիւնն ակնկալելը[37]:

Անդրադառնալով Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովի շրջանակներում Հայկական Հարցի դիւանագիտական քննարկումներին զուգահեռ ընթացող հայ-ռուսական բանակցութիւններին՝ Պօղոսեաններն, ընդհակառակը, նկատում են, որ Մոսկուայի դիրքորոշումը միայն առաջին հայեացքից էր հակահայկական.

Ռուսաստանը, լինելով հանդերձ քեմալական Թուրքիայի դաշնակիցը, դէմ էր Անդրկովկասում նրա դիրքերի ուժեղացմանը, քաջ գիտենալով, որ Քեմալը

ձգտում էր ոչ միայն տիրանալ Բաքուի նաւթին, այլեւ իրականացնել համաթուրանականութեան նախնական ծրագիրը՝ ընդհանուր սահման ունենալ թուրք-թաթարական աշխարհի հետ, իսկ համաթուրանականութիւնն առաջին հերթին ուղղուած էր Ռուսաստանի դէմ այն պարզ պատճառով, որ թուրք-թաթարական ցեղերի մեծ մասի հայրենիքները Ռուսաստանի տարածքում էին:
Մոսկուան նաեւ գտնում էր, որ, ոչ թէ Երեւանը, այլ եթէ ինքը հանդէս գար թուրքերի հետ բանակցող կողմ, հնարաւոր կը լինէր չափաւորել թուրքերի ախորժակը: Մանաւանդ, բացարձակապէս ակնյայտ էր, որ Հայաստանը պարտուած էր, եւ, եթէ չլինէր Ռուսաստանի հակազդեցութիւնը, թուրքերը չէին յապաղի տիրանալու ամբողջ Արեւելեան Հայաստանին եւ աւարտին հասցնելու հայ բնակչութեան ամբողջական բնաջնջումը[38]:

Պօղոսեանների կարծիքով, անգամ 1920ի թուրք-հայկական պատերազմի ընթացքում ՀԱՀ կառավարութիւնը «*շարունակում էր «ռուսական վտանգից», եթէ ոչ աւելի շատ, ապա նոյնքան վախենալ, որքան թուրքականից*»: Նա «*մինչեւ վերջ էլ Ռուսաստան-Եւրոպա-Թուրքիա կապակցութիւններում անգամ երկրի կործանման պահին, նախ յոյսը դնում էր Եւրոպայի, ապա Թուրքիայի հետ «լեզու գտնելու»* վրայ»[39]: Ըստ Պօղոսեանների, թուրք-ադրբեջանական զաւթողական նկրտումների նկատմամբ ՀԱՀ անվտանգութիւնն էապէս կ'ամրապնդուէր, եթէ 1920ի գարնանը Մոսկուայում ստորագրուէր հայ-ռուսական պայմանագիրը: Սակայն պայմանագիրը չկնքուեց, որովհետեւ հայկական կողմն ակնկալիքներ ունէր Արեւմուտքից ու այդ պատճառով ձգձգում էր բանակցութիւնները, մերժում փոխզիջումների հնարաւորութիւնը, իսկ ռուսական կողմը ձգտում էր խճճել հայ-ռուսական բանակցութիւնները՝ դրանք ստորադասելով Անկարայի ու Բաքուի հետ Պետրոգրադի բոլշեւիկեան կառավարութեան ռազմաքաղաքական յարաբերութիւնների ամրապնդմանը[40]:

Համբարձում Կարապետեանի կարծիքով, բնական եւ անխուսափելի էր ՀԱՀի շրջադարձը դէպի Խորհրդային Ռուսաստան: Ուղղակի, ՀԱՀ դիւանագէտները նկատի չէին առել, որ Ռուսաստանը կը բարձրացնէր Հայկական Հարցը Փարիզի Խորհրդաժողովի օրակարգից դուրս բերելու, ապա նաեւ Սեւրի Պայմանագրից հրաժարուելու հարցը՝ ՀԱՀի ու Թուրքիայի միջեւ բանակցութիւններում միջնորդի դեր ստանձնելու դիմաց: Պատմաբանի համոզմամբ, ՀԱՀը պէտք է արագ կողմնորոշուէր, քանի որ Թուրքիան եւ Ռուսաստանը գործում էին թէ՛ դիւանագիտութեամբ, թէ՛ զէնքով: Աւելին, որքան ամրապնդում էր նրանց գործակցութիւնը, այնքան շեշտւում էր դրա հակահայկական ուղղուածութիւնը: Միաժամանակ, խորհրդա-քեմալական վտանգին գումարուելու էին գալիս խորհրդայնացած Ադրբեջանի յաւակնութիւնները Արցախի, Զանգեզուրի, Շարուրի ու Նախիջեւանի նկատմամբ[41]: Իսկ Մելիքեանի կարծիքով, Հայկական Հարցի լուծման ձախողումը ու ՀԱՀի անկումը պայմանաւորուած էին ոչ միայն քեմալա-բոլշեւիկեան մերձեցմամբ «համաշխարհային իմպերիալիզմ»ի ու Կովկասում այդ «իմպերիալիզմի օճախ Հայաստանի Հանրապետութեան» դէմ,

այլեւ՝ քեմալականութիւնը բոլշեւիզմի դէմ ուղղելու անգլօ-ֆրանսիական քաղաքականութեամբ: Դա «*յանցաւոր համագործակցութիւն էր, որի պատմա-քաղաքական գնահատականը չի տրուած մերօրեայ Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետութեան կողմից*»[42] նշում է Մելիքեանը, դրանով իսկ առաջադրելով ռուսական պետութեան նկատմամբ ՀԳՀի պաշտօնական դիրքորոշումը ձեւակերպելիս անցեալի պատմական դասերը հիմնաւորապէս հաշուի առնելու, բայց եւ ծայրայեղութիւնների մէջ չընկնելու անհրաժեշտութիւնը:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԻ ՎԵՐԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ

Ուշագրաւ են Յակոբեանի 1992ի դիտարկումները ՀԱՀի արտաքին քաղաքականութեան ընթացքից հայութեան առնելիք դասերի վերաբերեալ՝ յանուն հայոց ազգային անկախ պետականութեան ներկայի եւ ապագայի: Պատմաբանի գլխաւոր եզրայանգումն այն է, որ միմիայն սեփական ուժերին ապաւինելն է ազգի գոյատեւման ու զարգացման միակ ճշմարիտ երաշխիքը: Սրանից հետեւում է, որ պէտք է լինել իրատես եւ բաւարարուել իրական հասանելիքով.

> ... Ի վերջոյ, պէտք է մէկընդմիշտ ըմբռնել այն յաւիտենական ճշմարտութիւնը, որ իւրաքանչիւր պետութիւն կամ ազգ նախ եւ առաջ հետամուտ պէտք է լինի իր սեփական, ազգային-պետական շահերի պաշտպանութեանը: Առանց այդ շահերի հաշուառման, անմտութիւն կը լինի կարծել, թէ որեւէ պետութիւն կը պաշտպանի մէկ այլ պետութեան կամ ժողովրդի շահերը[43]:

2008ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի նախաձեռնած հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած բանակցային գործընթացն առիթ էր, որպէսզի Աշոտ Մելքոնեանն իր հրապարակային ելոյթներում ու զանգուածային լրատուամիջոցներին տուած հարցազրոյցներում հանգամանօրէն անդրադառնար այն վտանգաւոր հետեւանքներին, որ կարող էր թողնել հայ-թուրքական արձանագրութիւնների վաւերացումը Հայկական Հարցի արդարացի լուծման վրայ[44]: Պատմաբանի համոզմամբ, ՀՀ եւ Թուրքիայի միջեւ գործող սահմանի *դէ եուրէ* ճանաչման վերաբերեալ արձանագրութիւններում ձեւակերպուած դրոյթի ընդունումը կը նշանակէր հրաժարում Սեւրի Պայմանագրից, Հայոց Ցեղասպանութեան դիմաց Արեւմտեան Հայաստանով հատուցման խնդրից եւ ՄԱԿի անդամ Թուրքիայի ու ՀՀի միջեւ Ախուրեան-Արաքսով փաստացիօրէն գործող սահմանագծի ճանաչում: ՀՀն, ըստ պատմաբանի, պէտք է կարեւորի Սեւրի Պայմանագիրը, որը ՀՀ տարածքը սահմանում է 160,000 կմ², եւ որի համաձայն, ՀՀին մաս պէտք է կազմի Տրապիզոնի, Էրզրումի, Վանի ու Պիթլիսի վիլայէթների տարածքի զգալի մասը:

Հայ-թուրքական յարաբերութիւնները կարգաւորելու նպատակով 2008-09ի Երեւանի ու Անկարայի միջեւ տեղի ունեցած հրապարակային բանակցութիւններում արձանագրուած վտանգաւոր զարգացումները թէ՛ հայ

պատմաբաններին ու իրաւաբաններին, թէ՛ ՀՀ պաշտօնական շրջանակներին բերեցին այն համոզման, որ Հայոց Ցեղասպանութիւնը մէկ դար անպատիժ է դրա հետեւանքների յաղթահարման իրաւական աշխատակարգերի անորոշութեան պատճառով, ինչն էլ անդրադառնում է հայոց անկախ պետականութեան անվտանգութեան, զարգացման հեռանկարների, հայ ազգային միասնութեան ապահովման վրայ: Այս պայմաններում ՀՀ կառավարող եւ գիտական շրջանակներում անցում կատարուեց Հայոց Ցեղասպանութեան հիմնախնդրի տեսական-իրաւական ուսումնասիրութիւնից դէպի դրա գիտագործնական վերլուծութիւն, դէպի Հայոց Ցեղասպանութեան հետեւանքների վերացման, հայոց պահանջատիրութեան հիմնահարցերի մշակում պատմիրաւական ու միջազգային-իրաւական տեսանկիւնից: Նաեւ կարեւորուեց հիմնախնդրի համազգային հայեցակարգի ձեւաւորումը: Հայաստանեան պատմաբանների գնահատմամբ, Արեւմտեան Հայաստանում հայկական անկախ պետականութեան վերականգնումը Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով հայ ժողովրդի կորուստների հատուցման խնդիրը վերջնականօրէն կարգաւորելու հիմքերից մէկն է եւ թերեւս՝ գլխաւորը[45]: Նրանց համոզմամբ, թուրքական պետութեան կառավարման ձեւի կամ տարածքի փոփոխութիւնը չի կարող որեւէ կերպ ազդել յանցագործ պետութեանը քաղաքական պատասխանատուութեան ենթարկելու եւ ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման գործընթացների վրայ:

Արմէն Մարուքեանի կարծիքով, Հայոց Ցեղասպանութեան հետ կապուած խնդիրների լուծումը պէտք է ստանձնի հայ ժողովրդի այն հատուածը, որն անմիջականօրէն տուժել է երիտթուրքերի իրականացրած ցեղասպանութեան քաղաքականութիւնից: Սակայն, քանի որ հայկական սփիւռքն օժտուած չէ գերիշխանութեամբ, գործող միջազգային-իրաւական համակարգում եւ, ըստ գոյութիւն ունեցող իրաւական նորմերի, նա չի կարող դիտուել իբրեւ միջազգային իրաւունքի անդամ, հետեւաբար, որպէս պահանջատէր չի կարող հանդէս գալ որեւէ միջազգային ատեանում: «*Եթէ անգամ Սփիւռքը ունենար իրաւական հնարաւորութիւն՝ ներկայացնելու ցեղասպանութեան հետեւանքով տուժած հայ ժողովրդի շահերն ու իրաւունքները, տրամաբանական չէր լինի այդ գործընթացից դուրս թողնել Հայաստանում բնակուող ցեղասպանութեան զոհերի ու վերապրածների ժառանգներին*»[46]՝ մատնանշում է պատմաբանը, յաւելելով, որ ՀՀն անմիջական առնչութիւն ունի հայ ժողովրդի՝ ցեղասպանութիւնից տուժած հատուածի շահերի ու իրաւունքների հետ, քանի որ փուլային տարբերակով հանդիսանում է ՀԱՀի իրաւայաջորդը[47]: Մարուքեանն ընդգծում է, որ ներկայումս, ըստ միջազգային իրաւունքի, ՀՀն կարող է ներկայացնել եւ պաշտպանել Հայոց Ցեղասպանութեան միայն այն զոհերի ու վերապրածների ժառանգների շահերը եւ իրաւունքները, որոնք հանդիսանում են իր քաղաքացիները: Իսկ ինչ վերաբերում է արեւմտահայերի շահերի ներկայացմանն ու

պաշտպանութեանն, ապա այս առիթով պատմաբանը յիշատակում է Արեւմտահայերի Երկրորդ Համագումարը, որը դեռեւս 1919ին օժտել է ՀԱՀը նման իրաւունքով: 1919 Փետրուարի 12ին համագումարի ընդունած «Քաղաքական Բանաձեւի» 5րդ կէտի համաձայն, Արեւմտահայերի Գործադիր Մարմինը ՀԱՀ կառավարութեան եւ խորհրդարանի հետ միասին պէտք է ձեռնարկէր իրական քայլեր Միացեալ, Ազատ Հայաստանի հռչակման ուղղութեամբ[48]: Օժտելով հանդերձ Հայաստանին նման իրաւունքով՝ Արեւմտահայերի Համագումարն ընդգծում էր միասին ու համատեղ աշխատելու կարեւորագոյն հանգամանքը: Մարուքեանը շեշտում է այս դրոյթի արդիականութիւնը, քանի որ Հայոց Ցեղասպանութեան բոլոր հետեւանքների վերացման գործում պատասխանատուութիւն ունեն թէ՛ ՀՀն եւ թէ՛ Սփիւռքը[49]:

Մելքոնեանը խնդիրն առաւել արդիական է համարում հայ-թուրքական արձանագրութիւնների սառեցման պայմաններում՝ այդ փաստաթուղթը կեանքի կոչելու հնարաւորութեան առնչութեամբ նշելով, որ «*դա ոչ ոք չի պատկերացնում ո՛չ պատերազմի, ո՛չ էլ ուժի գործադրման տարբերակով: Աշխարհը մէկ անգամ դէ եւրէ հաստատել է իր կամքը՝ Օսմանեան Կայսրութեան՝ որպէս համաշխարհային քաղաքակրթութեան դէմ թշնամի երկրի փլուզման հանգամանքը, եւ արդարացիօրէն օսմանահպատակ ժողովուրդների համար արձանագրել է հեռանկար*»[50]: Մելքոնեանը նկատում է, որ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտելու իր քաղաքականութեամբ հանդերձ Թուրքիան ինքն է սպառնում միջազգային դատարան դիմել՝ հիմնաւորմամբ, թէ իրեն յանիրաւի մեղադրում են ցեղասպանութիւն իրագործելու մէջ: Այնպէս, որ խնդիրը վաղ թէ ուշ շօշափուելու է միջազգային դատարանում, ինչին պէտք է պատրաստ լինել: «*Մենք Սեւրի դաշնագրի լոյսի ներքոյ պիտի պատրաստ լինենք նման մարտահրաւէրի*»[51]՝ կարեւում է նա:

ԱՄՓՈՓՈՒՄ

1991-2019ին ՀՀ պատմագիտական միտքը գնահատելի աշխատանք է կատարել 1918-20ի հայկական անկախ պետականութեան եւ ազգային միասնութեան հիմնահարցերը նորովի ուսումնասիրելու, կարեւորութիւնը վերաիմաստաւորելու եւ վերագնահատելու ուղղութեամբ: Աշխատութիւններում խնդրոյ առարկայ հիմնահարցերի վերաբերեալ արտայայտուած տեսակէտները տրամաբանօրէն փոխլրացնում են միմեանց: Դրանք պատմագիտական մտքի արժէքաւոր ու սթափ ընդհանրացումներ են, որոնք ուսանելի են համահայկական խնդիրների օրակարգը մշակող եւ լուծմանը յետամուտ ազգային, պետական ու քաղաքական շրջանակների համար:

ՀՀ պատմագրութիւնը դեռեւս ասելիք ունի այս ուղղութեամբ, քանի որ հայկական անկախ եւ միացեալ պետութեան ստեղծման գաղափարի մասին արխիւային ու գիտավերլուծական նիւթը սպառուած չէ, դեռեւս կան լուսաբանման-մեկնաբանման կարիք ունեցող փաստեր ու երեւոյթներ: Բացի այդ, դեռեւս լրամշակման կարիք ունի այն համընդգրկուն հայեցակարգը,

որով հնարաւոր դառնայ աւելի համապատկերային գնահատել վերոնշեալ խնդիրների քննութիւնը: Եւ վերջապես, հայոց պահանջատիրութիւնը դեռեւս սպասում է իր արդար բաւարարմանը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Պատմաբանասիրական Հանդէս*ում [2020:1 (213), էջ 60-80] լոյս է տեսել յօդուածս՝ «Հայկական Հարցի 1991–1920 թթ. Պատմութեան Լուսաբանումը Հայաստանի Պատմագրութեան Մէջ (1991-2019 թթ.)»: Զոյգ աշխատանքներս փոխլրացնում են միմեանց՝ ընթերցողին հնարաւորութիւն տալով ամբողջական պատկերացում կազմել Ա. Աշխարհամարտի աւարտական փուլում, Փարիզի Վեհաժողովում եւ ՀԱՀի տարիներին հայկական անկախ պետութեան գաղափարի նկատմամբ թէ՛ ազգային-պետական կառոյցների եւ ուժերի, թէ՛ մեծ տէրութիւնների դիրքորոշումների ու քաղաքականութեան շուրջ 1991-2019ի ՀՀ պատմագրութեան մէջ արտայայտուած կարծիքների եւ տեսակէտների մասին: Միաժամանակ դրանք փորձ են՝ անջատաբար վերլուծելու Հայկական Հարցի 1918-20ի պատմութեան ազգային բովանդակութիւնից եւ միջազգային-դիւանագիտական բնոյթից բխող հիմնահարցերը, որոնք պատմագիտական աշխատութիւններում ներկայացուած են միահիւսուած: Այդ է պատճառը, որ զոյգ յօդուածներում որոշ փաստեր ու պատմագիտական գնահատականներ անխուսափելիօրէն կրկնւում են:

[2] Վ. Մելիքեան, *Իշխանութեան Հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասեան Կոմիսարիատի Գործունէութիւնը եւ Հայ Իրականությունը (1917 թ. Նոյեմբեր-1918 թ. Փետրուար)*, խմբ.՝ Յ. Յարութիւնեան, Մեսրոպ Արք. Աշճեան Մատենաշար 64, Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, 2010, էջ 153-4, 161:

[3] Նոյն, էջ 166:

[4] Պատմաբանը նկատի ունի 1908ի երիտթուրքերի յեղաշրջման նախօրեակին Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան 1907ի փարիզեան համագումարին ՀՅԴ ներկայացուցիչների մասնակցութիւնը, որով, ըստ էութեան, գործնական հիմքի վրայ էր դրուել քաղաքական այդ ուժերի գործակցութիւնն ընդդէմ ընդհանուր թշնամու՝ սուլթանական կառավարութեան: ՀՅԴն այդ քայլին գնացել էր՝ չստանալով որեւէ խոստում կամ երաշխիք առ այն, որ իշխանութեան հասնելուց յետոյ երիտթուրքերը պատրաստ էին ճանաչելու Արեւմտեան Հայաստանի անկախութիւնը կամ՝ բարենորոգումներ անցկացնելու Հայկական Վիլայէթներում:

[5] Նոյն, էջ 89:

[6] Համբարձում Կարապետեան, *Սեւրի Պայմանագիրը Հայոց Ճակատագրում*, խմբ.՝ Աւագ Յարութիւնեան, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ Հրատ., 2004, էջ 13. նաեւ՝ Հրանդ Աւետիսեան, *Հայկական Հարցը 1918 Թուականին*, խմբ.՝ Ալբերտ Խառատեան, Երեւան, Բարձրագոյն Դպրոց Հրատ., 1997, էջ 41, 102:

[7] Նոյն, էջ 126, 128-9, 135:

[8] Նոյն, էջ 106. նաեւ՝ Ստ. Պողոսեան, Կ. Պողոսեան, *Հայկական Հարցի եւ Հայոց Ցեղասպանութեան Պատմութիւն, III Հրտ., Գիրք I, Մաս Ա (Հայկական Հարցը 1917 թ. Երկրորդ Կէսից Մինչեւ ՀՀ Ստեղծումը)*, Երեւան, Հայաստան Հրատ., 2004, էջ 78-9, 95, 114, 148, 151-2, 157:

[9] Նոյն, էջ 232-33:

[10] Աւետիսեան, *Հայկական*, էջ 253:

[11] Նոյն, էջ 237-38. նաեւ՝ Գ. Պետրոսեան, *Անդրկովկասը Դիւանագիտական Յորձանուտում. Հայոց Անկախ Պետականութեան Կերտումը (1917 թ. Փետրուար–1918 թ. Յունիս)*, խմբ.՝ Լ. Աւետիսեան, ԵՊՀ Հրատ., 2018, էջ 239-43:

[12] *Հայաստանի Առաջին Հանրապետութեան Խորհրդարանը*, կազմ. եւ հրատ.՝ Ա. Զաքարեան, խմբ.՝ Թ. Սողոմոնեան, Գ. Թանանեան, Երեւան, *ՀՀ Ազգային Ժողովի* Հրատ., 2018, էջ 50-1: Հմմտ.՝ Ս. Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, Երեւան, Հայաստան Հրատ., 1993, էջ 194:

[13] Ա. Մելքոնեան, *Յեղասպանութիւն եւ Հայրենազրկում. Ճանաչումից՝ Հատուցում (Յօդուածներ եւ Հարցազրոյցներ)*, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան, Զանգակ Հրատ., 2015, էջ 129:

[14] Ա. Յակոբեան, *Հայաստանի Հանրապետութիւնը 1918–1920 թթ., (Անկախութեան 100-Ամեակի Առթիւ)*, խմբ.՝ Գ. Խուդինեան, Երեւան, Լուսակն Հրատ., 2018, էջ 38:

[15] Աւետիսեան, *Հայկական*, էջ 328-9:

[16] Վ. Հ. Մելիքեան, *Արեւմտահայերի Համագումարները եւ Հայկական Հարցի Փուլերը 1917–1923 թթ.*, Երեւան, Զանգակ-97, 2007, էջ 7, 9, 11-12:

[17] *Համահայկական Խորհրդակցութիւններ (1912–1920 թթ.) (Փաստաթղթերի եւ Նիւթերի Ժողովածու)* պատ. խմբ.՝ Ա. Վիրաբեան, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2004, էջ 333-504. նաեւ՝ Ս. Պօղոսեան, *Պօղոս Նուբար Փաշա: Ազգային Գործիչը*, Խ. Աբովեանի ՀՊՄՀ Հայոց Պատմութեան Ամբիոն, գիտ. խմբ.՝ Մ. Կարապետեան, Ս. Դանիէլեան, Երեւան, Զանգակ-97, 2004, էջ 162-70:

[18] Այս մասին տե՛ս՝ Մելիքեան, *Արեւմտահայերի*, էջ 12:

[19] Նոյն, էջ 5-6:

[20] Մելիքեան, *Արեւմտահայերի*, էջ 8. նաեւ՝ Ա. Յարութիւնեան, *Սեւրի Պայմանագիրը եւ Հայ Հասարակական Քաղաքական Միտքը*, Երեւան, ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2004, 139 էջ:

[21] Լ. Խուրշուդեան, *Հայկական Հարցը. Բովանդակութիւնը, Ծագումը, Պատմութեան Հիմնական Փուլերը*, խմբ.՝ Բ. Ուլուբաբեան, Երեւան, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն, 1995, էջ 49-50:

[22] Պօղոսեան եւ Պօղոսեան, *Հայկական Հարցի եւ Հայոց Յեղասպանութեան Պատմութիւն, III Հտր. (Հայկական Հարցը 1920–1922 Թուերին), Գիրք II*, Երեւան, Հայաստան Հրատ., 2003, էջ 176, 198-9, 201, 206:

[23] Աւետիսեան, *Հայկական*, էջ 335:

[24] Նոյն, էջ 336:

[25] Г. А. Аветисян, "Генерал Акоп Багратуни (1879-1943)," [Հ. Ա. Աւետիսեան, «Զօրավար Յակոբ Բագրատունի (1879--1943)»], *Պատմաբանասիրական Հանդէս*, 1997:1, էջ 54-5:

[26] Աւետիսեան, *Հայկական*, էջ 337-38:

[27] Մելիքեան, *Արեւմտահայերի*, էջ 24-25:

[28] Նոյն, էջ 43:

[29] Նոյն, էջ 45-46:

[30] Գ. Գալոյեան, *Հայաստանը եւ Մեծ Տէրութիւնները 1917–1923 թթ.*, խմբ.՝ Վ. Միքայէլեան, Երեւան, Գիտութիւն Հրատ., 1999, էջ 60-1:

[31] Նոյն, էջ 64-5, 67.

[32] Նոյն, էջ 123:

[33] Նոյն, էջ 132:

[34] Ա. Յակոբեան, *Հայաստանի Հանրապետութիւն (1918–1920 թթ.)*, Երեւան, Հայաստան Հրատ., 1992, էջ 24:
[35] Նոյն:
[36] Նոյն:
[37] Նոյն, էջ 26:
[38] Պօղոսեան եւ Պօղոսեան, *Հայկական Հարցի..., Գիրք I, Մաս Բ*, էջ 173:
[39] Նոյն, էջ 170-1:
[40] Նոյն, էջ 146-7, 150-1:
[41] Կարապետեան, էջ 64, 81, 87:
[42] Մելիքեան, *Արեւմտահայերի*, էջ 29, 34, 43:
[43] Յակոբեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, էջ 27:
[44] Ա. Ա. Մելքոնեան, *Հայոց Պատմութեան Դասերն Ու Պատգամները*, Երեւան, Գիտութիւն Հրատ., 2013, էջ 388-9, 407-9, 410, 421-3, 482-3, 506:
[45] Ա. Ց. Մարուքեան, «Թուրքիայի Միջազգային-Իրաւական Պատասխանատուութեան Հիմնախնդիրը. Ամփոփում եւ Առաջարկներ», *Վէմ Համահայկական Հանդէս*, 2010:Բ(Ը),1(29), Յունուար-Մարտ, էջ 15-17. նաեւ՝ Ա. Պապեան, «Օսմանեան Կայսրութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան Իրաւայաջորդութեան-Շարունակականութեան Հարցի Շուրջ», *Հայրենատիրութիւն. Հայոց Պահանջատիրութեան Իրաւական Հիմունքները եւ Յարակից Հարցեր (Յօդուածների Ժողովածու)*, Երեւան, Ասողիկ Հրատ., 2012, էջ 446-50. նաեւ՝ Լ. Յովհաննիսեան, «Հայերի Ցեղասպանութեան Համար Թուրքիայի Պատասխանատուութեան Հիմնախնդիրը», *Հայաստան. Ցեղասպանութիւնից Վերածնունդ, 1915–2015*, Երեւան, Նոյեան Տապան Հրատ., 2015, էջ 310-32. նաեւ՝ Ա. Մելքոնեան, Գ. Պօղոսեան, Ա. Աղասեան, Ա. Մարուքեան, Դ. Քերթմենջեան, Հ. Մելիք-Ադամեան, Վ. Վարդանեան, Գ. Բաղալեան, Ա. Յովհաննիսեան, *Ցեղասպանութեան Հետեւանքով Հայ Ժողովրդի Կորուստները եւ Հատուցման Կառուցակարգերի Մեթոդաբանական Հիմքերը*, խմբ.՝ Ա. Մարուքեան, Երեւան, Տիր Հրատ., 2019, 608 էջ:
[46] Մարուքեան, «Թուրքիայի Միջազգային», էջ 18:
[47] Նոյն, էջ 18-19:
[48] Մելիքեան, *Արեւմտահայերի*, էջ 10:
[49] Մարուքեան, «Թուրքիայի Միջազգային», էջ 19:
[50] Մելքոնեան, *Ցեղասպանութիւն*, էջ 285:
[51] Նոյն:

ASSESSMENT OF THE MAIN ISSUES OF ARMENIA'S 1918–1920 STATEHOOD AND NATIONAL UNITY BY THE HISTORIANS OF THE REPUBLIC OF ARMENIA BETWEEN 1991 AND 2019

(Summary)

LILIT HOVHANNISYAN
lilithovannisian@yahoo.com

This study reviews and assesses post-Soviet Armenian historiography output from a current perspective. It includes the factors that led to the proclamation of independence in 1918, the nationwide steps taken for the realization of the idea of an independent and united Armenia, the political orientation adopted by the state leaders preserving the tiny, weak state, and the domestic and foreign factors that impacted its growth and preservation and influenced Armenian unity.